


ՅՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր ե գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղի. ողջ դ. 80
» » վեցամսեայ » 50
Օստր եղիքներ տարեկան ծառի 25
» » վեցամսեայ » 14
Թղթաստի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութիւնն
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԿՏԱԿՆԵՐՈՒ ՅՈՒՐԶԸ

Կտակներու վրայ չա՛տ կը խօսուի այս օրերս եգիպտոսի ազգային շրջանակներուն մէջ. և իրաւամբ: Միեւնոյն չաբժուոն պատահած երկու մահեր, մէկը հարուստ ծերունի մը ու միւսը չափաւոր կարողութեան տէր երիտաւ սարդ մը, իրենց կենդանութեանը խորհրդերն են բան մը թողուլ ազգին. և դադարէին հազիւ հողին յանձնուած՝ կտակին տրամադ-
րութիւնները կը պարտին բերնէ բերան: Առաջինը իր ստացուածքէն հաստատուն եկաւ միւստ մը նշանակած է՝ երեք մասի բաժ-
նուած, ուսկից պիտի օգտուին Դահիբէի, Եր-
րորդը համեստ գումար մը կը թողու պատե-
ղի եկեղեցիին ու գերեզմանատան մատրան: Կը յուսանք որ մեռելներուն կամքը ու յի-
շատակը յարգուելով, այս կտակներ գործադ-
րուին ճշդիւ:

Հրապարակաւ այս տեսակ փափագ մը չեղտելու տեղի չի պիտի մնար, եթէ մեր մէջ աւանդական սովորութիւն դարձած չըլլար ինդիւր ու դժուարութիւն յարուցանել միշտ կտակներու շուրջը. գոնէ Թուրքիոյ հայոց համար տխուր ճշմարտութիւն մըն է այս. Ռուսիայէն մեր ազգակիցները՝ ասոր բոլո-
րովին հակառակ՝ օրինակելի ճշդապահութիւն մը կը ցուցունեն, ինչ որ բնաւ չէ ազդած մեր վրայ դժբաղդաբար:

Եթէ մեր ազգային ու հոգեւոր իշխա-
նութիւնները, Պոլսոյ մէջ, այնչափ թոյլ վար-
ուած չըլլային կտակներու գործադրութիւնը պահանջելու մասին, եթէ մեր եպիսկոպոս-
ները՝ եկեղեցեցոյ բեմէն՝ փառաւոր դամբա-
նակներու վերջը գովեստ չի չուայէին ժա-
ռանգորդներուն և աշխարհականները՝ ժո-
ղովներու մէջ՝ իրենց ազդեցութիւնը չի բա-
նեցունէին շնորհակալութեան բանաձեւեր քը-
ւէարկել տալու համար, կտակակատարները թերեւս քիչ մը խղճահարութիւն ունենային կամ գոնէ ակնածէին հանրային կարծիքէն: Բարեգործական կտակներու խափանարարնե-
րը, ցաւալի է ըսել, ունեցած են նաեւ ի-
րենց օռկան լրագիրներ ալ որոնք գիտեն լռել կամ հանդակատար հրատարակութիւն-
ներ միայն ընել: Այս բոլոր ձախորդ միա-
բանութիւններուն առջեւ՝ ազգն ալ ձանձրա-
ցած է, կտակ ընել ուզողներն ալ:

Ախտ մը դարձած է այս. արմատացած, փտտած վէրք մը, որ հատու նշգրաններու կը կարօտի՝ մաքրուելու, բժշկուելու համար: Հոգեւորականութիւնը, մամուլը, ազգային գործերու գլուխ գտնուողները՝ իրենց բարո-
յական ազդեցութեամբ՝ կրնան գործել այս բժշկութիւնը, արիւրաբար ու անկեղծաբար: Այդ գործելու, խաթր նայելու, ակնկալութիւն-
ներ ու նկատողութիւններ ունենալու յուսի սովորու-
թիւնը, ինչպէս մեր հանրային կեանքի շատ մը պարագաներուն մէջ, կտակներու առթիւ ալ աղետաբեր եղած է: Եթէ քանի մը հան-
րածանօթ կտակները միայն գործադրուած ըլլային, որոնք կրթական նպատակներու յատ-
կացուած են, այսօր աղքատ տղաքներու ամ-
բողջ սերունդ մը հասած պիտի ըլլար՝ լաւ դաստիարակութիւն առած և արհեստ սորված: «Հոգեւոր», «պահպանիչ» կամ ժողովներու բանաձեւները այս արդիւնքը առաջ բերելու համար՝ հրաշքներու դարը անցած ըլլալու չէր:

Համեմատաբար պզտիկ կտակները նուազ ենթակայ են խափանուելու. առանց այս միտ-
թարական բացառութեան, կտակ բառը պէտք էր ջնջել հայերէն բառարաններուն մէջէն:

ՔՐՕՆԻԿ

Չ'իյոյ դժբաղդութիւն մը, ցաւ մը, արկած մը, վիշտ մը, դիպուած մը կամ տաղտուկ մը որուն առաջքը առած չըլլայ աստուածային իմաստութիւնը և կամ մարդու ինքը, այն օրէն ի վեր՝ որ զրախ տարնակ անուայ ամբողջ եղեմէն դուրս նեղուեցաւ նոտած տանը վարձքը չի վճարող պարզ մահկանա-
ցոյի մը պէս:

Ջրհեղեղին դէմ՝ Նոյեան տապանը, ամուսնու-
թեան դէմ՝ ամուրիութիւնը, անձրեւին դէմ՝ հովա-
նոցը, ծերութեան դէմ՝ Պրատեն Սէքար, աւեր-
խածութեան դէմ՝ Երկու մէկը կտուր, կեղծ-
մաշկին դէմ՝ սէքօնը, մաշկին դէմ՝ կատուն, ատու-
ջութեան դէմ՝ բժշկութիւնը, թուխութեան դէմ՝ բուտրան, մարելիքի դէմ՝ օտը բօլոնքը, կրակի դէմ՝ ջուրը, բարկութեան դէմ՝ քաջախը, Բրէնս տը Շիմի դէմ՝ Ռիկոն, բաժանորդագրութեան դէմ՝ ձրի և հեշ-
տարար ընթերցումը, օրէնքին դէմ՝ կաշառքը, ջերմին դէմ՝ սօլիթաթօն, երկարակեցութեան դէմ՝ Երեկ-
տրական թրամուէլը, գոլութեան դէմ՝ Միլիթրի դրա-
մարկները, ռուսական քաղաքականութեան դէմ՝ գեր-
մանականը, չանթին դէմ՝ շանթարգելը, կարճատե-
սութեան դէմ՝ անոնցը, անհամ ատենախօսութիւն-
ներու դէմ՝ խուլութիւնը, բանբաններին դէմ՝ je m'en f... ismère, կենսութիւնը դէմ՝ մահը և կեղծ բարոյա-
կանին դէմ՝ Փարոսը:

Եթէ դուք լսն մնաց, յիշողութեան ապի-
կարութեանը տուէք, կապալէք:

Աստուածային և անհատական ջանքերէն դուստ

որոնց նպատակն է վտանգը բաժնաւ և ձախորդ արկածները կարելի եղած չափով նուազեցնել, կան նաեւ ընկերութիւններ որոնք մարդուս կեանքը և ինչքը ապահովել իրենց գործ ըրած են:

Առէք օրինակի համար հրդեհներու դէմ և կեանքի վրայ ապահովագրական ընկերութիւնները և պիտի տեսնէք թէ ասոնց ուղղութիւնը և նպա-
տակը ուրիշ բան չէ բայց եթէ մարդուս կեանքը աւելի երջանիկ ընել և ապրիլը աւելի քաղցր:

Հրդեհէն և մահէն դուստ որոնք ընկերութեան հանգիստը և անհատներու երջանկութիւնը կը վեր-
դուեն, վտանգ մը եւս կար որուն դէմ դարձան մը գտնել դեռ և ոչ մէկուն մտքէն անցած էր:

Տասնընկերորդ դարը այդ դարմանը չի գտած չէր կրնար վերջանալ, ասոր ապացոյցն է այն չըր-
ջարեարկանը զոր այս պահուս կոտանանք լոնտոնէ: Եւ իբրեք անգլիական ընկերութիւն մը կը ծանուցանէ թէ պատրաստ է յնչին primeով մը ապահովել իր յախորդներն ընդդէմ... անհատաբարիմ արդի շահերու:

արաւ տեղը չէ որ անգլիայիները գործի մարդ յորջորջուած են:

Այդ բրիտանական ընկերութիւնը ահա՛ վտանգ մը, անպատեհութիւն և անփափկանիւտութիւն մը մէջտեղէն կը վերցնէ և ահագին ծառայութիւն մը եւս կուգայ մատուցանել մահկանայութեան այն դա-
ստիարդին որ մենէ տարբերելու համար արկը մը ու-
նենալու հարկին մէջ կը գտնուի:

Աստուածական մը, դրամատէր մը, սեղանաւո-
րական ընկերութիւն մը, հաստու մը քսան երե-
տուն տարի աշխատելէ և կամ Բանամական խնդրոյ մը մէջ գտնուելէ վերջը՝ հազար, քսան հազար, հա-
րիւր հազար ոսկի մէկ կողմ կը դնէր և արկը մը կու-
նենար որուն բանալին կը յանձնէր հաւատարիմ մարդու մը որուն արկիւակալ տիրոջը կուտար: Եւ կը պատահէր որ այդ պարոնը պարզ distractionի հետեւանօր օր մը կանհետանար հետը տանելով... արկիւին պարունակութիւնը: Դեռ անցեալ օր, կը յիշէք, մեր թրամվէյներուն քեպէն կծկել դրաւ մեր տուած միլեմետրէն գոյացած 1500 ոսկիի մօտ գու-
մար մը պրպանը մոռնալով: Իրաւ է որ այդ փափ-
կանիւտ լիվանքիցը այս կերպով հրաժարական տուող պաշտօնեաներու ոչ առաջինն էր և ոչ ալ վերջինը:

Այս անպատեհութեան դէմ բան մը ընելու էր և ահա վերայիշեալ ընկերութիւնը կը կազմուի ի Լօնտոն, որուն շնորհիւ այլ եւս դրամատէրը կրնայ հանգիստ քնանալ, բուռական է որ իր արկիւակալը ապահոված ըլլայ այդ limited ընկերութեան մէկ սլայմանագրով:

Այստեղեւ արկիւակալի մը տուած վնասը դրա-
մատրոջ չի պատկանիր, այլ այն ընկերութեան ու-
րուն քով իր հաւատարմութիւնը ապահոված է:

Տնտեսագէտ մարդը՝ եթէ կուզէ չի փճացնել իր հարստութիւնը, պէտք է ապահովագրէ իր տունը որ այրելու ենթակայ է և արկիւակալը... կծկելը դնելու:

Իսկ ես որ՝ ոչ մին ունիմ և ոչ միւսը և հան-
դիստ կը քնանամ ինչպէս Յովնան՝ կէտ ձուկին փո-
րին մէջ, ես կը կարծեմ թէ այս տառապող մարդ-
կութիւնը կատարելապէս երջանիկ ընելու համար ուրիշ ընկերութեան մը պէտք կայ որուն գործը

ըլլայ ապահովագրել իր յաճախորդներն ընդդէմ . . .
ամուսնական անհաւատարմութեան:

Իրբեւ զիտ, ասոր ըսելիք չունիք: Ես այնպէս
կը կործանեմ թէ հազար հաւատարմ արկղակալ
գտնելը աւելի դիւրին է քան թէ երկու տուգինս
հաւատարմ կին:

Յոռետեսութիւն է պիտի գոչէք. que voulez-
vous . . . c'est plus fort que moi.

Ենթադրենք թէ այս յօդուածս ութ օրէն Ռոջիւտ
ներս քաջէն թարգմանուելով, դրամի այդ թագա-
ւորն ընդ համար զտնուէին ինծի և մէջերնին կազ-
մին ընկերութիւն մը որուն անունը ըլլար «La Pré-
voyante» Compagnie d'assurance contre l'infir-
mité des femmes mariées, հաւատացէք որ ասոր
բաժնեկիցիները Ville de Parisէն շատ աւելի
լաւ պիտի բաժնէին հրապարակին վրայ օրովհետեւ
աշխարհիս վրայ ամենէն շատ գործ տեսնող ընկե-
րութիւնը «La Prévoyante»-ը պիտի ըլլար:

Եւ այն ատեն պիտի տեսնէիք թէ ամուսնու-
թիւնները օր քան պիտի շատնային մեր մէջ և այլոր:
Կարելի չէր անոյթ աւելի մարդասիրական գիւտ
մը ընել, որուն համար հարստանալու իրաւունքն
ունենալ կը կարծեմ, գիւտ մը որուն առջեւ նոյն
խի Սըր Էտիար Վինտրիզ գլխարկը պիտի հանէր
իր անտեսագլխի համբուէն մըլուած:

Գլխարկ չորս և միայն ինկու: Տարիներէ ի
վեր ատիկը կը փնտռէի քարեկամական գիտողու-
թիւններ ընել հայերու այն մասին որ առանձնական
ֆէսը մէկ կողմ նետելով եւրոպական գլխարկը կը
գործածէ:

Մենք հայերս — շատ քիչ բացառութեամբ —
այնպէս կը գործածենք գլխարկը ինչպէս Էսթիմացի
կին մը պիտի գործածէր Ծաւա ա մենը և կամ հիւ-
սիսային բեւեռի բնակիչ մը պիտի հագնէր ամու-
գիւնի մը:

Կատարեալ անշնորհութիւն:

Կազմ Մանչեսթըրի մերադարձող մանկիւնա-
բուհան ըրանք կուգէ Բարիւն աղջկեղ երիտասարդ,
Պոլայ մէջ երկար տարիներ գլխարկ գործածող պա-
րոն և կամ վերջի դէպքերէն ի վեր գլխարկակիր
գաղթական, ամենքս ալ գեռ շատ խակ ենք այդ
գիւտ եւրոպական գլխարկ գործածելու գիտութեան
մէջ: Գիտութիւն բաւարար մի խնդրք, անոր համար
որ գլխարկ գինը և մանուսնող հանելը գիտութիւն
մըն է որ կենցաղագիտութեան մէջ մասը կը կազմէ:

Փողոցին մէջ գլխարկով կը քալեն և քմեմանով
մը կը բարեւեն ձեզի, գրասենեակը կուգան և գըլ-
խարկ չեն հաներ, մեռել մը կանցնի և գլխինին
չեն բանար, կնկան մը հետ կը խօսին և գլխարկին
գլխինուն վրայ կը սլահեն և կարծես այս ամենը
բաւական չէին, երկէ եկեղեցին բանի մը գաղթա-
կաններու հանգիստեցանք որոնք գլխարկին չէին
հանած նոյն խի տոճարին մէջ ուր ննջեցեալի մը
արարողութիւնը կը կատարուէր:

Չուրաններուն յատուկ այս տգիտութիւնը այն-
քան ջիւղբաւ գալած է որ եթէ կարողութիւնս
ներկը գիրք մը պիտի յօդինէի . . . ի պէս գլխարկ
գործածողաց:

Ուրիշ ասի ի պահելով նախնական գիտելիքներ
տալ գլխարկ գործածելու եղանակին վրայ, այսօր
բաւական կը համարիմ թուէ թէ գլխարկ գինէն ա-
ռաջ զայն հանելը սովորը անհրաժեշտ պայման մըն
է անոնց համար որոնք քննադատութեան տեղի
տալ չեն ուզեր:

Ռեքոմենդեցէք որ գլխարկ հանել և ձեզի
ըսեմ «Յոռետեսութիւն»:

Յ. Ա.

ԱՅԺՄԷՈՒԹԻԻՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երեկ, 19/31 դեկտեմբեր, Մշակի հիւ-
նադիր ու խմբագիր քարեկոյնացի Գրիգոր
Արծրունի մահուան հիմնգերոյդ տարեդարձն
էր, որ կը կատարուի ի Թիֆլիզ Խոջեման-
ի գերեզմանատան մէջ հոգեհանգիստով,
հանգուցեալի գերեզմանին վրայ:

Հետոնէ, մենի ալ կը միացունենի մեր

յարգանքի քաժիկը մեծանուն հրապարա-
կագրին տաղանդին վրայ հիացողներու եւ
համակրողներու արտայայտութեան:

Գրիգոր Արծրունի երեւումը, քառորդ
դար առաջ, յրազրական հրապարակին վրայ,
յայտնութիւն մը եղաւ հայ մամուլին հա-
մար որուն կարգ մը աւանդական տղորու-
թիւններն ու նախապաշարունակները ցնցեց
իր գորաւոր գրչով: Անկախ դիրքի ու հարս-
տութեան տէր անձ մըն էր որ իր ժամանա-
կը, դրամը, աշխատանքին կը հուրհեռ ու
կը զոհեր քերթին: Կովկասի ազգայնոց հան-
րային ու ընկերական կեանքին մէջ մանա-
ւանդ մեծ յեղաշրջում առաջ քերթի իր սուր
քննադատութիւններ ու կոռույի գրաւորներ,
անկաշխարհ որեւէ նկատմէ. եւ ինչպէս
քնական է, իր վրայ սխալացողներու ստուար
քաղնութեան հետ ունեցաւ նաեւ հակառա-
կողներու յեղեղն մը ու ստուարաշ ճա-
խանձոտութիւններ իր դէմ:

Մահը, որ դառնապէս խորակեց անոր
կեանքը, չի կրցաւ սակայն ընդհատել հիւ-
նած գործը որ կը շարունակուի իրեն գա-
ղափարակից ու իր ձեռքին տակ մարդնած
խմբագրական խումբի մը կողմէ: Իր հօրե-
նական հարստութիւնը այդպէս գործածելով,
Մշակի խմբագիրը պիտի կրնար քողոյ լա-
ւագոյն ժառանգութիւն մը ապագայ սերունդ-
ներուն: Մտաւորական կեանքի, գրչի ազդե-
ցութեան հրապարակաւ կատարեալ քննադատ
սխալ մըն էր այդ տաղանդաւոր օրագրողը,
գոր ամեն հայ հրապարակագիր կրնայ իրեն
օրինակ առնել:

ԱՆԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԹԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Աղեքսանդրիայէն մեզ կը հաղորդեն հե-
տեւեալ տեղեկութիւնները որոնք կը վերա-
բերին Աղեքստախնամ ընկերութեան վերա-
կալմութեան պարագաներուն:

Քաղաքիս Աղեքստախնամ ընկերութիւնը որ
1893ի վերջերը կազմուած է, քոլորովին անկերպա-
րան վիճակ մը ստացած էր գրեթէ երկու տարիէ
ի վեր: Գործադիր Ժողովի անդամներէ մի քանին
1896ի սկիզբներէն ի վեր հրաժարած և ուսանք ալ
առանց պաշտօնագէտ հրաժարած ըլլալով՝ գործէ
քաշուած էին, և այս վիճակին բնական հետեւանքը
եղած էր ընկերութեան անդամներուն լքումը և
հասցիի աղբիւրներուն նուազիւ: Այնպէս որ ըն-
կերութեան 72 անդամներուն թիւը վերջերս իջած
էր երեսուն երկու, չը նայելով որ քաղաքիս հայ
գաղթականութիւնը հետզհետէ ստուարանալու վը-
րայ է:

Թաղ. Խորհուրդը, թէպէտ քիչ մը ուշ, փափա-
քեցաւ այս վիճակին դարման տանիլ և ընկերութեան
հին և նոր անդամները ինչպէս նաեւ շատեր որոնք
առանց անդամ եղած ըլլալու կրնային այս պարու-
գային մէջ օգտակար հանդիսանալ ի ժողով հրաւիրեց
ընկերութեան արդի կայութեան գաղման խորհե-
լու համար:

Դեկտեմբեր 12ին տեղի ունեցաւ առաջին նիս-
տը որուն ներկայ գտնուած էին միայն 12 աղգա-
յինք: Այս թիւ՝ որոշում մը տալու անբաւական
նկատուելով, յաջորդ կիրակի օրուան համար հրա-
ւերը կրկնուեցաւ: Դեկտ. 19ի նիստին հրաւիրեալ
ներս թիւն էր 83: Թեր ու դէմ շատ մը վիճաբա-
նութիւններէ ետքը կարգացուեցաւ ընկերութեան
կազմական կանոնադրը որուն մէջ ինչ ինչ թերու-
թիւններ ու սեղմումներ նշմարուելով, ներկաներէն
Տիար Երուանդ Տէրվիշեան առաջարկեց հինգ ան-
դամներէ բաղկացեալ առժամեայ մասնախումբ մը
կազմել որու պաշտօնը ըլլայ ընկերութեան կանոնա-
դիրը վերաքննութեան ենթարկել, ի հարկին ինչ ինչ
պրագորութիւններ և բարեփոխումներ ներմուծել ու

տեղեկագրով մը ընկերութեան անդամական ժողովին
ներկայացնել ի վաւերացումս Այս առաջարկութիւնը
երկրորդուեցաւ Տէրվ. Ժամկոչեանի կողմէ՝ սա յաւել-
ուածով որ առժամեայ Մասնախումբը միանգամայն
պարտականութիւն ստանձնէ ընկերութեան համար
նոր անդամներ գտնել: Ներկայք իրենց հաւանու-
թիւնը միաձայնութեամբ տուած ըլլալով՝ գաղտնի
քուէարկութեամբ ձեռնարկուեցաւ Մասնախումբի հինգ
անդամներու ընտրութեան: Դեռ քուէները չի տըր-
ուած՝ Տիար Ե. Տէրվիշեան յայտարարեց թէ Թաղ.
Խորհուրդը անդամք պէտք չի ընտրելի ներկայա-
նան. սակայն այս գաղափար շատերու կողմէ ընտ-
րողական իրաւունքի վրայ տեսակ մը ճնշում նկատ-
ուելով, արձագանք չի գտաւ:

Եւ որովհետեւ ներկաներէն շատեր Աղեք. ըն-
կերութեան անդամ չէին և կամ ժամանակէ մը ի
վեր հրաժարած էին, Թաղ. Խորհուրդը ուզելով այդ-
պիսիներուն գործողութեան օրինական ձեւ մը տալ,
առաջարկեց նախ անդամ արձանագրուիլ և յետոյ
քուէարկութեան մասնակցիլ, ինչ որ առաւել կամ
նուազ դժկամակութեամբ ընդունուեցաւ:

Առաջին քուէարկութեամբ բացարձակ մեծա-
մասնութիւն շահեցան Տեարք՝ Տէրվ. Մ. Ժամկոչեան
և Յովհ. Մուրադեան (Ստեփանապոլ Թաղ. Խորհուրդ):
Մնացեալ երեք ընտրելիները համեմատական միա-
ցած ըլլալով երկրորդ քուէարկութեամբ ընտրուեցան
Տեարք՝ Յովհ. Դանիէլեան, Գառնիկ Չալոբեան և
Յովսէփ Չալոբեան: Հակառակ ներկաներու և ի
մասնաւորի Տեար Ե. Տէրվիշեանի խնդրանքին՝ Տեար
Յովհ. Մուրադեան հրաժարական տուաւ և իրեն
տեղ անդամ կարգուեցաւ քուէներու առաւելութեան
աստիճանով Տիար Լեւոն Պէրպէրեան:

Առժամեայ մասնախումբը եռանդով գործի
ձեռնարկած է և իր առաջին գումարումը ունեցաւ
անցեալ կիրակի օր Թաղ. Խորհուրդարանի մէջ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ, Դեսպա-
նական վերջին գումարման մէջ մեծ զարմանք
պատճառել է Ռուսիոյ ներկայացուցչին յայ-
տարարութիւնը թէ իր կառավարութիւն կը
հրաժարի Գարատաղի Բէդրովի իշխանին
ընտրելիութիւնը պաշտպանելէ, իբրեւ կու-
սակալ Կրէտէի, և Յունաստանի Եօրկիոս իշ-
խանը կառավարէ այդ պաշտօնին:

—Վաշինկթընի օսմանեան նախկին դես-
պան Րիֆաթ պէյ Աթէնքի դեսպան անուան-
ուել է: Մովրօսիօրտաթօ իշխանն ալ, ինչ-
պէս ծանուցինք արդէն, վերահաստատուած
է Պոլսոյ հելլենական դեսպանութեան պաշ-
տօնին մէջ:

—Էթնիքի Էթէրիաին նկատմամբ Աթէն-
քէ հաղորդուած տեղեկութիւնները թէ և հա-
կասական կը դառնան, բայց հետաքրքրական
ըլլալէ չեն դադրիր: Հարցաքննիչ դատաւո-
րը որ պաշտօն ունէր այդ յեղափոխական ըն-
կերութեան վերագրուած արարքները ստու-
գելու, սկսել է իր քննութեան: Դրամատուն
մը գացեր է արգելքի տակ առնելու համար
20,000 ֆրանքի գումար մը որ Էթնիքիին կը
պատկանի, սակայն իմաց տուել են իրեն թէ
այդ գումարը վերցուած է: Ընկերութիւնը
տեսարակ մը պատրաստած է, ի պաշտպա-
նութիւն իրեն, որ պիտի հրատարակուի մօտ
օրերս: Ի մէջ կարգ մը պաշտօնադրերու ու
ընթ կը հաստատեն թէ հելլէն կառավարու-
թիւնը Էթնիքիին համաժողով էր անկանոն զօր-
քերու Մակեդոնիա արշաւելու մասին — որ
պատերազմին սկզբնապատճառը եղաւ — այդ-
տեսարակ պիտի պարունակէ Պ. Տէլեանիսի մէկ
նամակն ուղղուած Սըրիօ Լոմպարատօ ուսուց-
չին որ յեղափոխական ընկերութեան գործօն
անդամներէն մէկն է:

—Բանտիայէն եւրոպական թերթերու ուղղուած հեռագիր մը կը հաղորդէ թէ դեկտ. 23ին, Հալմիսի մօտ, թուրքերը յարձակեր են յայնչերու վրայ որոնք ապրանք կը փոխադրէին գիւղէ գիւղ: Տասնհինգ հոգի սպաննելու եւ արջառ ու բռններ յախչողներ են:

—Թալիզի թղթակցին տեղեկութեանց նայելով, Մակեդոնիոյ գործերն հետզհետէ յոռեգոյն կեդարանք մը կառնեն: Դուռը կառածելով որ Ֆէրիսիանս իշխանը թեկնածութիւններ ունի այդ գաւառին վրայ, թուրքեւրոպական սահմանագլխի զօրքերը կառնելու հետզհետէ: Միւս կողմէ, Պէրլիսի գահաճիւղը կը գանգատուի պոլկար կզերին ընթացքէն որ կը փնտսէ եղբւր Մակեդոնիոյ սերպերուն կրօնական իրաւասութեանց:

Այս միջոցին, յանկարծ կիմացուի Պէլկրատի մէջ թէ Դուռը որոշեր է ճանչնալ Մակեդոնիոյ չորս պոլկար նոր եպիսկոպոսներու պաշտօնը: այս լուր մեծ իրարանցում առաջ կը բերէ Սերպիոյ մայրաքաղաքին մէջ: Նախարարապետ Պ. Եօրկէվիչ Ռուսիոյ դեսպանատունը կը վազէ իմանալու համար թէ ճիշդ է, բայց Ձարին ներկայացուցիչը զարմանք կը կեղծէ: Սա ակնհայտ է սակայն որ Սուլթանը կողգէ պոլկարներուն գոհացում տալ ի փնտս սերպերուն, վախճալով որ չըլլայ թէ առաջինները՝ որոնք լաւագոյն կերպով պատրաստուած եւ աւելի յանգուզն են քան միւսները, առաջիկայ գարնան դժուարութիւններ յարուցանեն Թուրքիոյ դէմ:

—Սոփիայէ կը հաղորդեն թէ Ֆէրիսիանս իշխանն ի մօտոյ այցելութիւն հիտի տայ Ձարին, իր դեռած զաւկին՝ Պարիս իշխանին հետ ու Նիքօլա Բի սանն է:

ՓՈՔՐԻԿ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ

Բ. Յուցակ Նուիրատուաց

Գումար Ա. ցուցակի զը. ուղջ	531 50
Փարոսի բարեկամութիւն մը	10
Խ. Ե.	12 50
Տիար Է. Տիկին Ե. Թորոսեան	20
Տիար Մ. Անտեանց	97 50
Յ. Կիւրճեան	5
Մ. Թ. (Աղեքսանդրիա)	10
Աղքատ տղոց բարեկամը	10
Յ. Պ.	10
Տիար Ստեփան Գալէնտէրեան	5
» Գրիգոր Մէնթէմէտեան (Զակաղի)	97 50
» Սարգիս Մէլիքեան	60
Տիկին Լուսիա Մէլիքեան	40
» Ա. Կառնարական (Աղեքսանդր.)	200

Գումար զը. ուղջ 1109 00

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Քաղաքական ժողովը պատրաստած է նոր տարւոյ պիւտճէն որ պիտի ներկայացուի Ընդհ. ժողովոյ Ատենապետին: Այս առթիւ կը հարցունեն մեզ թէ Առաջնորդարանի չըրջանակներուն մէջ ի՞նչ ընդունելութիւն գտաւ Փարոսի այն առաջարկը թէ վերջացող չըջանի հաշուեցոյցն ու գործառնութեանց տեղեկագրին ամփոփումն հրատարակուին, հիմայ որ եգիպտոսի հայ գաղութն իր թերթն ունի:

Թէհրանի մէջ իբր երկու տարիէ ի վեր հրատարակուող Շառիք ազգ. լրագիրն իր հրատարակութիւնը դադարեցուցեր է, անշուշտ բաժանորդներու փութկոտութեան շնորհիւ:

Մանթաշեան տան Դահիւրէի ճիւղին տնօրէն Տիար Մ. Անտեանց այս հինգշաբթի օր պատիւ ունեցաւ Բարձր. Խտիվին ներկայացուելու՝ պարսկական ընդհ. հիւպատոս Միւրզա Ֆարաճուլա Խ...-ի միջոցաւ, Ապտինի պալատը:

Հաճութեամբ կիմանանք թէ Տիար Վառաճապուհ Գարիպէտեան, որ կը պաշտօնավարէ Հանրօգուտ շինութեանց նախարարութեան մէջ, երկրորդ կարգի ճարտարագէտի աստիճանէն՝ նախարարական որոշմամբ՝ բարձրացեր է առաջին աստիճանի, գնահատուելով իր կարողութիւնն ու օրինակելի աշխատասիրութիւնը:

Մեր ողբացեալ բարեկամին՝ Տիար Ներսէս Մաճառեանի յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարուեցան չորեքշաբթի օրը արժանավայել շքով և ցաւակցութեան ընդհանուր արտայայտութիւններու մէջտեղ:

Ժամ 2ին, հանգուցելոյն բնակարանին մէջ ի Սէպիթի, մեռելական կարգը կատարուելէ ետք, դազաղը դուրս հանուեցաւ հանդիսական թափօրով և դրուեցաւ մեռելակիր շքեղ կառքի մը մէջ որ ծածկուած էր պսակներով: Թափօրին կը նախագահէր Առաջնորդական Տեղապահ Հայրը: Յուղարկաւորաց խումբ բազմութիւն մը, որուն մէջ կային նաեւ օտարազգիներ, կը հետեւէր դազաղին որուն ծածկոյթին ծոպերը բռնած էին Տեալը՝ Կարպետ պէյ Շէրիտեան, Արթին պէյ Ստեփան, Տիրան Փիլիպպոսեան, Ռ. և Մ. Նշանեան և Գոճիքա:

Պսակները նուիրած էին Տեալը՝ Յովհաննէս Մաթոսեան, Սեդրաք Դաւիթեան, Կ. Շէրիտեան, Մեսրոպ Ագամեան, Մէնաշէ և Ծաղիկեան և ուրիշ բարեկամք հանգուցելոյն:

Խումբ մը ոստիկաններ կառաջնորդէին գնացքին:

Սգակիր էր հանգուցելոյն կրտսեր եղբայրը, Տիար Վաղարշ Մաճառեան, չըջապատուած իր ընտանիքին անդամներով և մտերիմ ու ցաւակից բարեկամներով:

Էզդէթիլի պողոտային վրայ, Շէփրտ օթէլի մօտ, Տիար Գարիբէլ Լէքէճեան՝ ծառօթ արուեստագէտը՝ թափօրին ամբողջական լուսանկարն առաւ իբրեւ բարեկամական յարգանք մը հանգուցելոյն յիշատակին:

Եկեղեցիին մէջ, արարողութեանց կատարումէն ետք, Տ. Յակոբ Մ. վարդապետ յուզեալ շնչտերով դամբանական մը արտասանեց, գծելով հանգուցելոյն աշխատասէր ու ազնիւ կեանքը և յիշելով մասնաւորապէս թէ քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն կտակած է 50 ոսկի և Մարմինայի մատրան՝ 25 ոսկի:

Յաւարտ դամբանականին, թափօրը վերստին կազմուելով նոյն հանդիսաւորութեամբ ուղղուեցաւ մինչեւ Մուսթի բերանը, ուսկից յուղարկաւորաց մեծագոյն մասը և եկեղեցական հարք՝ իրենց տրամադրութեան ներքեւ դրուած լանտոներով հետեւեցան մեռել-

լակիր կաւարին մինչեւ Մարմինա: Թաղումը կարի սրտաշարժ եղաւ, երբ հող իջուցին՝ դեռ քանի մը ամիս առաջ կայտառ ու գործօն այդ երիտասարդին մարմինը, իր հանգուցեալ երկու եղբայրներուն մօտ հանգչելու: Տիար Վաղարշ Մաճառեան այնտեղ եւս ընդունեց ներկայից ցաւակցական արտայայտութիւնները:

Ներսէս Մաճառեան տիպար մըն էր ինքնօրնութեան ու աշխատասիրութեան, և իր եղբոր հետ ճարտարապէս կը վարէր երկաթեղինաց մեծ գործարան մը զոր հիմնած էին Դահիւրէի մէջ բաւական տարիներէ ի վեր և որ հետզհետէ յառաջդիմութիւն ու ընդարձակ գործառնութիւններ կը խոստանար, պատիւ բերելով հայ անուան օտար ճարտարութեստներու քով:

Տիար Վաղարշ Մաճառեան չնորհակալութիւն կը յայտնէ ամեն անոնց որոնք ներկայ գտնուեցան իր ողբացեալ եղբոր ՆԵՐՍԷՍ ՄԱՃԱՐԱՆԻ յուղարկաւորութեան և իրենց ցաւակցական զգացմանց հաւատարմք տուին այս տխուր առթիւ:

ՏԵՂԱԿԱՆ

Այսօր, Լատինաց տարեգլխոյ առթիւ, հիւպատոսարաններու մէջ ընդունելութիւններ կը կատարուին և եւրոպական հաստատութիւններն ու դրամատուները դոյ են:

Հանրօգուտ շինութեանց խորհրդական Սըր Թիքիէմ Կարսթէն հինգշաբթի Խտիվին ներկայացաւ ետք՝ ճամբայ ելաւ դէպի Վերին Եգիպտոս, քննական պտոյտի համար:

—Մարդահամարի տնօրէն Պուանէ պէյ նախարարապետ Մուսթաֆա փաշային յանձնէր է իր վերջնական տեղեկագիրը, ուսկից կերելի թէ ամբողջ եգիպտոսի բնակչաց թիւն է 9,734,405, որոնց 4,947,830ը արական սեռէ և 4,786,555ը իգական սեռէ: Ասոնցմէ դուրս են Սիվաի ովասիսը (5000 բնակչով), Տոնկուայի միւտիւրութիւնը (37,426) և Սուաքին (15,713):

—Աղեքսանդրիայէն կը հեռագրեն թէ երէկ առաւօտ կրկնակ ոճիր մը գործուեր է քաղքին մէջ: Մահմուտ Հալիֆա անուն կալուածատէր մը և իր կինը սպաննուած գրտնուեր են Վարչա թաղին մէջ: Այս սպաննութեան շարժառիթը ոչ գողութիւն է և ոչ ալ վրէժ կամ սիրային նախանձ, այլ... Ժառանգական խնդիր պարզապէս: Մինչև այժմ տասներհինգ ձերբակալութիւններ տեղի ունեցած են:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Այս առտու Պոմպէէն հասած յաջորդական հեռագրեր կը հաղորդեն թէ Անգլիոյ Խորհրդարանի անդամ Սըր Հալլօք Ալլէն որ իբրեւ զինուորական քննիչ Հնդկաստան զըրկուած էր, ձիով պտոյտի ելած պահուն ըսպաննուեր է բնիկներուն կողմէ:

—Աւստրիոյ խորհրդարանը տակաւին փակուած կը մնայ, վերջին դէպքերուն հետեւանօք: Կառավարական գործերը կը տնօրինուին կայսերական հրամանագրերու համաձայն:

—Բարիպէն Հափսի հեռագիր մը կը հաղորդէ թէ Բանամայի դատին մէջ ամբաստանուած բոլոր անձերը անպարտ արձակուեր են:

—Չինաստանի գործերը հետզհետէ կը դրդուեն հանրային հետաքրքրութիւնն Անգլ-

լից մէջ և կը զբաղեցունեն զիւանադիտու-
թիւնը: Պէտքերն թերթերէ մանք հաւանա-
կան կը ցուցունեն թէ Գերմանիոյ, Ռուսիոյ
և Ֆրանսայի միջեւ համաձայնութիւն մը գո-
յանայ ի մասին ծայրագոյն Արեւելքի և մին-
չեւ իսկ երկնային կայսրութիւնը բաժնելու
խօսքեր կը լսուին, հերքման ձեւին տակ:
Այդ պատահականութեան հանդէպ, Անգլիա
ալ ձառնի հետ դաշնակցելու սպառնալիք
կընէ, անուղղակի կերպով: Թայմզ կը հա-
ղորդէ թէ անսովոր ոգեւորութիւն մը կը աի-
րէ ձառնի մէջ, թէ՛ նաւային և թէ՛ զինուո-
րական, և մարտանաւեր կը համախմբուին ի
Նակասաքի:

—Նախորդ շաբթուն, Ֆրանսական Ակա-
դեմիան կատարեց նոր անդամի մը՝ Պ. Ալպէր
Վանտայի ընդունելութիւնը, Լէոն Սէի յաջորդ:
Լէոն Սէ թէեւ քառասնից կաճառը բազմած,
զբաղէտ մը, մատենագիր մը չէր, այլ եւ-
մտադէտ մը. դժուար էր ուրեմն անոր ակա-
դեմականի արժանիքը պատկերացնելու կոչ-
ուողին պաշտօնը, զոր փափկութեամբ կատա-
րեց Պ. Վանտալ: Տ'Օսմայիլ Կոմար, որ կը նա-
խագահէր նիստին, ինքն ալ խօսեցաւ նորա-
մտութեամբ ու շահեկան սնով մը Լէոն Սէի
վրայ և իր ճառին երկրորդ մասը նուիրեց
նորընտրի ակադեմականը ծանօթացնելու:

—Հնդկաստանի մէջ ժամտախտը վերըս-
կըսեր է երկիւղարի յարաճունութեամբ: Պոմ-
պէն կը հեռագրեն թէ այս չորեքշաբթի օր
54 դէպք պատահեր է և 37 մահ:

—Էթիոպիայի հրամանատարը, որ ամ-
բաստանուած է թէ մասնակցութիւն ունե-
ցած ըլլայ Տրէյֆիւսի գործին մէջ, պատե-
րազմական տեսանի մը առջեւ պիտի դատուի:

—Պանք տը Ֆրանսի անորէն կարգուեր
է Բարիզի մարտատանց տեսուչ Պ. Բալէն:

—Ամերիկայի ծովային նախորդ նախա-
րարին աղջիկը, Միս Լէյիա Հերպերթ, անձ-
նասպան եղեր է Վաշինկթընի մէջ, իր հօր
տան երրորդ յարկի պատուհանէն վար նետ-
ուելով, առաջուց բազկերակները կտրելով
մկրատով: Միս Հերպերթ վերջերս ձիէն իննա-
լով, խեղանդամ մնալու դատապարտուելէն
կը վախնար: Այդ վիճակէն նախամեծար սե-
պեր է կեանքին վերջ տալ:

—Սպանիոյ Կուատալարա քաղաքին մէջ
ցլամարտի հանդէս մը ահուելի արկածի մը պատ-
ճառ եղեր է: Կատալաճ ցու մը ահագին ոտ-
մամբ ցատքերով կրկէսը հանդիսականներէն
բաժնող անջրպետին վրայէն, սկսեր է ալ և
ահեակ եղջիւրի հարուածներ տալ, մինչ բազ-
մութիւնը զիրար կոխոտելով դուրս ելլել կը
փորձէր: Երեք հոգի մեռեր են, դիակներն
անճանաչելի դառնալով: Հինգ հոգի մահա-
մերձ վիճակի մէջ և երեսուն ալ վիրաւոր կան:
Այս բոլոր աղէտները անբաւական կըլլան
սակայն այդ վայրագ խաղը վերցունել Սպան-
իայէն:

ՕՐԱՑՈՅՑ

1898 թՈՒԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանու-
թեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը
ծախուի Փարոսի տպարանը ի գին 60 փա-
րադը:

PASCHAL & C^{IE}

C. G. MEIMARACHIS & C^{IE}
SUCCESEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵԽՈՒԹԵԱՆՑ
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԸՆԴԱՐՁԱԿ

ԲԱՍՔԱԼ ԵՒ ԸՆԿ.

Գ. Ճ. ՄԵՅՄԱՐԱԿԻ ԵՒ ԸՆԿ., ՅԱԶՈՐԴԲ
ԳԱԶԻՐԻ ԷՕԶՊԵԲԻԷ ԳԱԶԻՐԻ

Ձմեռնային նորաձեւութեան մետաքսե-
ղէներու, բրդեղէներու և այլ այս կարգի
ապրանք մեծ և բազմաթիւ փաճառով:

Բարիզեան վերջին ճաշակով պատրաս-
տուած գլխարկներու յատուկ փաճառաւորան
և մօտիւզներու վերաբերեալ նիւթեր:

ՆՈՐ ԺԻՒՂ

Անգլիական և Ֆրանսական ասուելէն-
ներու ինչպէս դերձակներու վերաբերող ապ-
րանքներ:

ՔՐԻՍՏՈՅԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու և
խոհանոցի առարկաներու:

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՁՆՈՒԻՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ
5—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոլսէն յափառու քերէլ տուած այս սեղանի
համար անառաք գինն կը ծախուի Երուսաղ Պողոս-
եանի խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գահիրէ
ուր կը գտնուի նաեւ գուս եւ պատուական օղի:
14—16

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
շապիկներ, շրջադրեալներ, ևն. մաքրութիւն,
ճշգրտահաւթիւն, և խիստ չափաւոր գին:
9—24

ՏՊԱՐԱՆ

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԻ ԵՐԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՅՈՒՆՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

ՏՈՄՍԵՐ

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած
յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով
կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեխարտերու եւ տոմարերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ
սօն օրերէ, անառաքեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱԶԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական լուազոյն գործա-
րաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով:
Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին:

Անգլիական և Ֆրանսական սքեսիալիքներ:
Թարմ հանգալիկ ջուրեր, անուշահոտութիւնք եւն.
Բնաւորական և մանրագիտական քննութիւնք:
Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց
համար: 15—50

Ս. ԹԵԼԵՍԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 3 ԹԵՎԵԻԳ փառա փողոց

ՇԱԼՈՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԵՄ

Կերպաններու զանազանութեամբ ու ըն-
տրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելու-
թեամբ այս տան գլխաւոր յաճախորդները գոհ
պիտի մնան թէ պատրաստուած հագուստ-
ներէն և թէ գիններու չափաւորութենէն:
Դիւրամատչելի պայմաններ: 1—4

Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառ-
տունէն Տեաք Զովակիմեան Եղբայր այս անգամ հա-
տատուած են ի Գահիրէ և Մուսիփ փողոցը՝ Լաթէսի
գոհարավաճառատուն դիմաց բացած են վաճառատուն
մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն Ֆանէլա,
գուլպայ և զանազան տեսակ շնորի շալիկներ, օձիք-
ներ, քեւեղներ:

Ճոխ գոնազանութիւն մարօքներէի, հոսեղեմնե-
րու և արդուզարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրա-
նայ: Շեֆիլտի հոշակաւոր պողպատեայ գործիներ,
ածելի, մկրաս, գմելի ևն:
ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐԻ
Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշգիւ և
փութով կը կատարուին: 12—24

ՄԻ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ միմիայն 22 դրուի անհաւատալի
գնոյ մը փութարէն, նիքէյ, կոթէյ լարուող, ընտիր
ժամացոյցներ կը վաճառուին Սեյվանեան մթերա-
նոցի մէջ, ի նաեւ խալիփ փաշայ (Ռսիերչայ շուկան)
Ճէփփի վէքեալէի մէջ:

Սեյվանեան մթերանոցի մէջ կը գտնուին նաեւ
ամեն ճաշակի և ամեն բոսկի յարմար, ոսկի, ար-
ծաթ, ոսկեպատ և նիքէյ ժամացոյցք, շղթայք և
գոհարեղէնք ինչպէս նաեւ պատի և քոնտի բազ-
մազան բանտիւղներ: 9—12



ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ԵՒ ԱՅՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ
Գ. ՈՐԾԱԾԵՑԷՔ

ԼԷՍՍԻՎՏԻԻ ԺԵՆԻՆ

Ծախիլ եւ ժամանակի խնայողու-
թիւն. — Մաքրութեան կատարելագոր-
ծութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճերմակե-
ղէներու եւ այլոց հալանելիւն:

ԿԱՐԵԻՐ. ԼԵՍՍԻՎՏԻԻ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՑՆԵՐ

Եւրոպիոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլո-
սարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ
դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեգիպոս

Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 22—24

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի